

Մանաւանդ դուք օրհնեա՛լ ըլլաք.  
 Ձեր մէջ է որ Յոյսերը մօտ յաղթութեան  
 Իբրեւ ճերմակ աղանիներ՝ ամենուն  
 Ծոցէն արփուո՛յն կը սլանան):  
 Եթերական կրակին խորէն իրիկուան,  
 Դեմի սարէն զառիվայր  
 Այն որ կ'իջնէ անչափելի քայլերով  
 Յերո՛ս մըն է, պերճահասակ քըրմապետ  
 Նեմեսիսին կուսական,  
 Եւ անձնուրաց նախախնամող մարդկութեան:  
 Արեւը դեռ չըմեկնած  
 Ճաճանչներն իր ամփոփեր է շեշտուղիդ  
 Անոր կուրծքին կարմրաբորբ,  
 Յայտեցնելով զէնուզարդէն պաղպաջուն  
 Ճառագայթներ՝ նման բամբշի մը գըլխուն  
 Ծամակալ մեծ ասեղներն:  
 Արիւն մ'ահա կը կայլակի տակաւին  
 Իր գօտիին արդարադատ կեռ սուրէն:  
 Կու գա՛յ, - ճակատն իր արդէն  
 Ծաղկապուած դափնիով:  
 Քայլերը ծանրը՝ փառքէն,  
 Եւ բըռնութիւնը ճըզմելէն՝ տենդակոխ  
 Ահաւասիկ կ'երկփեղկեն  
 Ժողովուրդն այն խոնարհած  
 Ատելութեան եւ աղօթքին բեռին տակ:  
 Նեմեսիսին ձօնելու  
 Ա իր նըւերը ունի.  
 Գըլխուն շուրջէն կ'արձըկէ  
 Դափնեպըսակը՝ զոր կոյսէն որբացած  
 Ծիրիմներուն նըստած տըրտում շուքին տակ  
 Իրեն համար հիւսեցին.